



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՐԱԿԵՆՏՐ



**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ.
21-րդ դարի մարտահրավերներ
և հնարավորություններ**

**DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century**

**РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
ВЫЗОВЫ И ВОЗМОЖНОСТИ 21-ого века**

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ

ՀՊՏՀ ռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

- ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ** - ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., դոցենտ
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, Կ.գ.դ., պրոֆեսոր
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, Կ.գ.թ., դոցենտ
ԱՇՈՏ ՍԱԼԼԱԶԱՐՅԱՆ - ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., Կ.գ.դ., պրոֆեսոր
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - ՀՊՏՀ պրոռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 հնարավորություններ: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ,
2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՛ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հեղափոխություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրապարակապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հեղափոխական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հեղափոխական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այսօրեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հեղափոխություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահեղափոխական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հեղափոխ գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մատչում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

РУЗАННА АРАКЕЛЯН

ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ АЛЬТЕРНАТИВНОГО ЗЕМЛЕДЕЛИЯ В РА

Ключевые слова: органическое сельское хозяйство, ГМО, экосистема, биоразнообразие, окружающая среда.

Обеспечение населения безопасными продуктами питания имеет первостепенное значение для современного общества. Достижения в сельском хозяйстве были обусловлены использованием минеральных удобрений и ядохимикатов в растениеводстве, а также гормонов и антибиотиков в животноводстве. Органическое сельское хозяйство сформировалось как альтернатива традиционным сельскохозяйственным производственным системам. Развитие данного направления стало одним из способов снижения отрицательного воздействия сельского хозяйства на окружающую среду и здоровье человека.

RUZANNA ARAKELYAN

DEVELOPMENT PROSPECTS OF ALTERNATIVE AGRICULTURE IN THE REPUBLIC OF ARMENIA

Key words: organic agriculture, GMO, ecosystem, biodiversity, environment.

Ensuring the safety of food is of significant importance for modern society. The basic achievements in agriculture were largely due to the use of fertilizers and pesticides in crop production, as well as hormones and antibiotics in husbandry. Organic farming emerged as an alternative to traditional agricultural production systems. The development of this area has become one of the ways to reduce the negative impact of agriculture on the environment and human health.

ՍԱՄՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՏՀ

ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՄԱՐԵՑՄԱՆ ՆՈՐԱՄՈՒԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱԿՆԿԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. կլիմա, հարմարեցում, ծրագրեր, ռեսուրսախնայողություն, նորամուծություն

Միջազգային հանրությունը լուրջ ջանքեր է գործադրում կլիմայի փոփոխության կանխարգելման և հետևանքների մեղմացման ուղղությամբ: Հայաստանը, որպես լեռնային երկիր, ունի ուղղաձիգ գոտիականություն, և կլիմայի փոփոխության հետևանքների մեղմացման նպատակով պահանջվում են, ըստ գոտիների, տարբերակված մոտեցում և

առավել արդյունավետ ծրագրեր: Հողվածում առաջարկվում են հարթավայրային, ցածրադիր և լեռնային համայնքների գյուղատնտեսության նորամուծական ծրագրեր:

Երկիր մոլորակի վրա կլիմայի փոփոխության իրողությունն այլևս կասկած չի հարուցում, քանի որ, ըստ Կլիմայի փոփոխության փորձագետների միջկառավարական խմբի (ԿՓՓՄԽ) գնահատականների, 1950-ական թվականներից սկսած, դիտարկվող մի շարք փոփոխություններ աննախադեպ են: Մասնավորապես՝ 1971–2010 թթ. ընթացքում տեղի է ունեցել օվկիանոսի վերին շերտի (0-700 մ) տաքացում, մեծացել է ծովի մակարդակի բարձրացման արագությունը: Ծովի մակարդակի միջին գլոբալ ցուցանիշը 1901–2010 թթ. ընթացքում աճել է 0.19 մետրով: Նախաարդյունաբերական (1850 թ.) ցուցանիշի համեմատությամբ մթնոլորտում ածխածնի երկօքսիդի պարունակությունն ավելացել է 40%-ով: Արտանետված ածխածնի երկօքսիդի 30%-ը կլանվել է համաշխարհային օվկիանոսի կողմից, ինչը հանգեցրել է օվկիանոսի թթվայնեցմանը¹:

Կլիմայի փոփոխության ռիսկի կառավարումը հռչակվել է որպես նոր հազարամյակի կարևոր մարտահրավերներից մեկը: Այս հիմնախնդիրը ՄԱԿ-ի ուշադրության կենտրոնում է և պարբերաբար քննարկվում է ամենաբարձր մակարդակով:

«Արտակարգ իրավիճակների նախարարության Հիդրոմետ ծառայության ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 1929–2016 թթ. ժամանակահատվածում հանրապետության տարածքում օդի ջերմաստիճանը բարձրացել է 1.23 աստիճանով, իսկ 1935–2016 թթ. տեղումների քանակը պակասել է 50 մմ-ով: Ավելին, 1994–2016 թթ. տարեկան միջին ջերմաստիճանի շեղումներն եղել են միայն դրական, և դրանց միջինը կազմել է 0.8 աստիճան: Կլիմայի փոփոխությունը որոշակի ներգործություն ունի նաև հիդրոոդերևութաբանական վտանգավոր երևույթների քանակի վրա: «Արտակարգ ծառայության ղեկավարը հիտված վտանգավոր երևույթների (ցրտահարության, կարկուտի, ուժեղ քամու, առատ տեղումների) գումարային դեպքերի քանակը միջինի (168 դեպք) նկատմամբ աճել է շուրջ 40 դեպքով, ինչը կազմում է բազմամյա միջինի 23.5%-ը:

Հիդրոմետ ծառայության վերլուծությունները ցույց են տալիս, որ եթե 1929–2000 թթ. տեմպով գնահատվեր մինչև 2100 թ., ապա ջերմաստիճանը կաճեր 1.48°C-ով, եթե առաջնորդվեինք 1929–2015 թթ. փոփոխության տեմպով, ապա ջերմաստիճանի աճը դարավերջին կհասնի 2.4°C: Սակայն, կապեր հաստատելով 2000–2015 թթ. ջերմաստիճանի փոփոխության արժեքների միջև, ստացվում է, որ արագացման տարեկան արժեքը 0.035°C է: Հիմք ընդունելով այդ միտումը՝ ջերմաստիճանի փոփոխությունը մինչև դարավերջ կհասնի շուրջ 6°C-ի²: Մեր կարծիքով՝ այս գնահատականը շատ բարձր է, բայց բոլոր դեպքերում անհրաժեշտ է ակտիվ գործունեություն ծավալել կլիմայի փոփոխության կանխարգելման և հարմարեցման ուղղությամբ:

¹ Ա. Մուրադյան, Կլիմայի փոփոխության փորձագետների միջկառավարական խումբ, intergovernmental panel on climate change, էջ 8:

² «Ա և Արցախի տարածքում կլիմայի փոփոխության դիտարկումները և մեկնաբանությունները, Համլետ Մելքոնյան, ներկայացում, 19.10.2017:

2015 թ. նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 12-ը Փարիզում տեղի ունեցած ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի կողմ երկրների հերթական՝ 21-րդ համաժողովն ընդունեց իրավական ուժ ունեցող միջազգային համաձայնագիր՝ «**Կլիմայի փոփոխության մասին» ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի Փարիզյան համաձայնագիր**՝ ըստ որի աշխարհի բոլոր պետությունները ստանձնում են կլիմայի փոփոխության զսպանը նպատակաուղղված հանձնառություններ: ՀՀ Ազգային ժողովը վավերացրել է Փարիզյան համաձայնագիրը **2017 թ. փետրվարի 8-ին**, որն ուժի մեջ է մտել **2017 թ. ապրիլի 22-ին**:

Ըստ համաձայնագրի՝ զարգացող երկրների կողմից ջերմոցային գազերի արտանետումների կրճատման կամ սահմանափակման գործողությունները պետք է մեկնարկեն՝ սկսած 2020 թ.: Բոլոր երկրների փոխհամաձայնությամբ որոշվել է զսպել մթնոլորտի գլոբալ միջին ջերմաստիճանի բարձրացումը նախաարդյունաբերական շրջանի (1850 թ.) ջերմաստիճանի նկատմամբ 2 աստիճանից նշանակալի ցածր մակարդակում՝ միաժամանակ ձգտելով չգերազանցել 1.5 աստիճանը (հողված 2, կետ 1 (ա))¹: Զարգացած երկրները տրամադրում են ֆինանսական ռեսուրսներ զարգացող երկրներին ինչպես կլիմայի փոփոխության կանխարգելման, այնպես էլ հարմարվողականության համար: Ֆինանսական ռեսուրսների տրամադրումը պետք է ուղղված լինի նշված երկու բաղադրիչի միջև հավասարակշռության հասնելուն:

Հայաստանի Հանրապետության ջերմոցային գազերի 2015–2050 թթ. գումարային արտանետումների բաժնեմասը (քվոտան) կազմում է 633 մլն տոննա: Հայաստանը ձգտում է, էկոհամակարգային մոտեցման տեսակետից, 2050 թ. հասնել ջերմոցային գազերի չեզոք արտանետումների, մեկ շնչի հաշվով՝ 2.07 տոննա/տարի:

Նշված քանակական պատավորությունների կատարումը տեղի կունենա միջազգային՝ ֆինանսական և տեխնոլոգիական համարժեք աջակցության պարագայում:

Հայաստանի պայմաններում կլիմայի փոփոխության հետևանքների մեղմացման նպատակով հարմարվողականություն պահանջող առավել խոցելի ոլորտներն են բնական էկոհամակարգերը (ջրային ու ցամաքային, այդ թվում՝ անտառային էկոհամակարգերն ու դրանց կենսաբազմազանությունը, հողային ծածկույթը), մարդու առողջությունը, ջրային տնտեսությունը, գյուղատնտեսությունը, էներգետիկան, բնակավայրերն ու ենթակառուցվածքները և զբոսաշրջությունը:

Ըստ իս՝ թվարկված ոլորտներից ամենազգայունը գյուղատնտեսությունն է, քանի որ արտադրությունը հիմնականում կազմակերպվում է բաց երկնքի տակ և օդերևութաբանական գործոններն էական ազդեցություն ունեն ինչպես արտադրական գործընթացների, այնպես էլ արդյունքային ցուցանիշների վրա: Ի դեպ, գերակշռող է այն կարծիքը, որ գյուղատնտեսության վրա կլիմայի փոփոխության ազդեցությունը միայն բացասական է: Մինչդեռ, մեր կարծիքով, որոշակի պարամետրերի առումով, այն կարող է նաև դրական լինել (աղյուսակ 1): Մասնավորապես՝ նկատի ունենք օդի ջերմաստիճանի բարձրացման պայմաններում մշակաբույսերի աճի բարենպաստ ժամկետի երկարացման, բարձրարժեք

¹ Փարիզյան համաձայնագիր, “ԻԱՁԵՐ” էկոլոգամշակութային ՀԿ, Երևան, 2016, էջ 28:

ջերմասեր մշակաբույսերի աշխարհագրության ընդլայնման, մեկից ավելի բերքի ստացման և այլ հնարավորությունները: Այդուհանդերձ, ՀՀ հիդրոմետ ծառայության դիտարկումները, Համաշխարհային բանկի և այլ միջազգային կազմակերպությունների փորձագետների կանխատեսումները ցույց են տալիս, որ մեր երկրում կլիմայի փոփոխության ազդեցությունը ինչպես գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության, այնպես էլ կենդանիների մթերատվության վրա հիմնականում բացասական է:

Աղյուսակ 1

**Կլիմայի փոփոխության դրական և բացասական դրսևորումները
գյուղատնտեսության ոլորտում***

<i>Բացասական</i>	<i>Դրական</i>
Հողերի բերրիության նվազում	Մշակաբույսերի աճի բարենպաստ ժամկետի երկարացում
Ջրային պաշարների նվազում	Բարձրաժեք ջերմասեր մշակաբույսերի աշխարհագրության ընդլայնում
Մշակաբույսերի բերքատվության նվազում	Մեկից ավելի բերքի ստացման հնարավորություն
Բույսերի հիվանդությունների և վնասատուների ավելացում	Գյուղատնտեսական կենդանիների, մշակաբույսերի և բազմամյա տնկարկների ծմեռացման նպաստավոր պայմաններ
Կենդանիների հիվանդացության մեծացում	Կենդանիների բաց պահվածքի կիրառում և շինությունների վրա կատարվող ծախսերի կրճատում
Արտադրության ծախսերի ավելացում	Արտադրության բազմազանեցման նոր հնարավորություններ

* Աղյուսակը կազմել է հեղինակը:

Միջազգային փորձը վկայում է, որ գյուղատնտեսության մեջ նորարարական տեխնոլոգիաների կիրառումը բնականոն ձևով հանգեցնում է կլիմայի փոփոխությանը, ոլորտի հարմարվողականության բարձրացմանը և գյուղական տարածքների կայուն զարգացմանը: Ուստի ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի և ՀՀ բնապահպանության նախարարության՝ Կլիմայի կենտրոնի նախաձեռնությամբ վերջին տարիներին մշակվում և ներդրվում են կլիմայի փոփոխության կանխարգելման և հարմարեցման ծրագրեր: Այդ նպատակով մեր կողմից մշակվել են ագրարային ոլորտին վերաբերող մեկ տասնյակից ավելի ծրագրեր, որոնք ներկայացվել են պետական կառավարման մարմիններին և մյուս շահակիցներին: Դրանք, բացի կլիմայի փոփոխության հարմարվողականության հիմնախնդրից, ուղղորդված են նաև գյուղատնտեսության արտադրական ներուժի լիարժեք օգտագործմանը, ռեսուրսախնայողական և նորամուծական տեխնոլոգիաների ներդրմանը, ինչպես նաև աշխատանքի պայմանների բարելավմանն ու արտադրողականության մակարդակի բարձրացմանը: Առաջարկված ծրագրերի մի մասը շահագրգիռ կազմակերպությունների և խորհրդատվական համակարգերի աջակցությամբ արդեն իսկ ներդրվում է արտադրությունում, իսկ որոշները հիմք են հանդիսացել ՀՀ կառավարության կողմից, ոլորտի գերակայություններին համապատասխան, ներդրումային ծրագրերի ընտրության և դրանց իրականացման պետական աջակցության համար: Մասնավորապես՝ խոսքը վերաբերում է ոռոգման համակարգերի զարգացման, հողերի մելիորատիվ վիճակի բարելավման, արոտավայրերի ջրարբիացման, գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների դեմ կենտրոնացված պայքարի, գյուղական ենթակառուցվածքների զարգացման և կա-

րևոր այլ ծրագրերի, որոնց շնորհիվ դրական միտումներ են արձանագրվել հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի արտադրության, այգեգործության, ինչպես նաև անասնապահության բնագավառներում: Գյուղատնտեսական հումք արտադրող և վերամշակող ընկերությունների միջև ընդլայնվում են պայմանագրային հարաբերությունները, որոնք հուսալի նախապայման են ստեղծում լուրիկի, պտղի, խաղողի և կաթի արտադրության ավելացման և եկամտաբերության բարձրացման համար:

Վերջին տարիներին նորարարական տեխնոլոգիաների ներդրմանը գործնական աջակցություն է ցուցաբերել նաև Համաշխարհային բանկի և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ իրականացվող «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագիրը, որի շրջանակներում, գյուղատնտեսության խորհրդատվական և տեղեկատվական համակարգերի ակտիվ մասնակցությամբ, գյուղացիական տնտեսություններում իրականացվել են «Նոր տեխնոլոգիաների գնահատման» և «Արժեշղթայի զարգացման» ծրագրերը: Ըստ առաջին ծրագրի՝ ներդրվել են նոր մշակաբույսերի մշակության, ոռոգման, անասնաբուծության զարգացման և ագրովերամշակման փորձացուցադրական տեխնոլոգիաներ, իսկ ըստ երկրորդի՝ աջակցություն է ցուցաբերվել կաթ, միս, միրգ, բանջարեղեն, հատապտուղ և մեղր արտադրողներին՝ ներքին և արտաքին շուկաներում մրցունակության բարձրացման նպատակով: 2015–2018 թթ. նախատեսվում է ֆինանսավորել 80 ծրագիր, յուրաքանչյուրին տրամադրելով 8000-50000 դոլարին համարժեք գումար, պայմանով, որ շահառուն ներդնի նույնքան գումար:

Աղյուսակ 2

Կլիմայի փոփոխությանը գյուղատնտեսության հարմարվելու ծրագրեր

h/h	Ծրագրեր	Ներդրման փարածքներ
1.	Դաշտապաշտպան անտառաշերտերը որպես կլիմայի փոփոխությանը գյուղատնտեսության հարմարվողականության միջոց	Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի մարզեր
2.	Կլիմայի փոփոխության հարմարվողականության ապահովման նպատակով ՀՀ ցածրադիր համայնքներում գյուղատնտեսության արտադրության դիվերսիֆիկացում	Տավուշի և Սյունիքի մարզեր
3.	Նորատունկ այգիներում տեղային մելիորացիայի և փոքրածավալ տարողություններով կաթիլային ոռոգման իրականացում	Արմավիրի, Արագածոտնի, Արարատի և Կոտայքի մարզեր
4.	ՀՀ արոտների կառավարման կատարելագործման համառոտ ծրագիր	ՀՀ մարզեր
5.	Բնական աղետների կանխատեսման և վաղ նախազգուշացման լաբորատորիայի ստեղծման համառոտ ծրագիր	Արմավիրի, Արարատի, Արագածոտնի մարզեր
6.	Ծղոտե հակերով անասնապահների կացարանների և տնտեսական շինությունների կառուցման համառոտ ծրագիր	Հեռագնա արոտավայրեր (յայլաներ)
7.	Չիչխանի անտառտնկումները որպես կլիմայի փոփոխության պայմաններում հողատարության կանխման, գետերի հոսքի կարգավորման և բնակչության լրացուցիչ եկամուտների ստացման աղբյուր	Գեղարքունիքի, Տավուշի, Լոռու, Շիրակի, Կոտայքի, Արարատի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզեր
8.	ՀՀ գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող համայնքներում միկրոանձրևացման «գոլդեն սպրեյ» համակարգի ներդրման համառոտ ծրագիր	Արմավիրի, Արարատի և Արագածոտնի մարզեր

2017 թ. ընթացքում ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնը ՀՀ գյուղատնտեսության նախարարություն է ներկայացրել «Գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության համակարգի ներդրման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» հետազոտության արդյունքները և մի շարք նորամուծական ծրագրեր¹ (աղյուսակ 2):

ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի «Բնօգտագործման տնտեսագիտություն և շրջակա միջավայր» բաժանմունքում առավել հանգամանորեն ներկայացվել են «Կլիմայի փոփոխության հարմարվողականության ապահովման նպատակով ՀՀ ցածրադիր համայնքներում գյուղատնտեսության արտադրության դիվերսիֆիկացում» և «Նորատունկ այգիներում տեղային մելիորացիայի և փոքրածավալ տարողություններով կաթիլային ոռոգման իրականացում» ծրագրերը:

SAMVEL AVETISYAN

ВОЗМОЖНОСТИ ВНЕДРЕНИЕ ИННОВАЦИОННЫХ ПРОГРАММ И ОЦЕНКА РЕЗУЛЬТАТОВ ПО АДАПТАЦИИ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА К ИЗМЕНЕНИЮ КЛИМАТА В АРМЕНИИ

Ключевые слова: климат, адаптация, программы, экономия ресурсов, инновации

Мировое сообщество приложит серьезные усилия для смягчения последствий изменения климата. Армения как горная страна имеет вертикальную зональность и смягчение последствий изменения климата требует дифференцированного подхода и более эффективных программ. В статье предлагаются инновационные проекты для сельского хозяйства в равнинных и горных районах.

SAMVEL AVETISYAN

OPPORTUNITIES FOR IMPLEMENTATION OF INNOVATIVE PROGRAMS AND EVALUATION OF THE RESULTS ON ADAPTATION OF AGRICULTURE TO CLIMATE CHANGE IN ARMENIA

Key words: climate, adaptation, programs, economy of resources, innovations

The world community makes serious efforts to prevent and mitigate the effects of climate change. Armenia as a mountainous country has a vertical zone and mitigation of the consequences of climate change requires a differentiated approach and more effective programs. The article proposes innovative projects of agriculture for the communities in plains and mountains.

¹ Ս. Ավետիսյան, Հ. Ծպենցյան, Ա. Դադունց, Ա. Վարդանյան, Ե.: «Տնտեսագետ», 2017, 112 էջ («Ամբերդ» մատենաշար):